

ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 2

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1

Ի՞նչն են անվանում հաշվարկման մարմին:

- 1) Կամայական անշարժ մարմինը:
- 2) Մարմինը, որի նկատմամբ դիտարկվում են այլ մարմինների դիրքերը:
- 3) Մարմինը (օրինակ՝ Երկիրը), որի մակերևույթին շարժվում են դիտարկվող մարմինները:
- 4) Բավականաչափ մեծ չափեր ունեցող մարմինը:

2

Մարմնի շարժումը բնութագրող մեծություններից՝ կոռորդինատներ, ճանապարհ, տեղափոխություն, արագություն որո՞նք են հարաբերական:

- 1) Սիայն կոռորդինատները:
- 2) Սիայն արագությունը:
- 3) Սիայն կոռորդինատները և արագությունը:
- 4) Նշված բոլոր մեծությունները:

3

Ուղղագիծ հավասարաչափ փոփոխական շարժման ժամանակ ո՞ր մեծությունը չի փոխվում:

- 1) Արագությունը:
- 2) Տեղափոխությունը:
- 3) Արագացումը:
- 4) Անցած ճանապարհը:

4

Ինչպե՞ս կփոխվի *h* բարձրությունից հորիզոնական ուղղությամբ նետված մարմնի քրիզի տևողությունը, եթե սկզբնական արագությունը մեծանա 2 անգամ: Օդի դիմադրությունն անտեսել:

- 1) Կմեծանա 2 անգամ:
- 2) Կփոքրանա 2 անգամ:
- 3) Չի փոխվի:
- 4) Կփոքրանա 4 անգամ:

5


Ինչպե՞ս կշարժվի մարմինը հաշվարկման իներցիալ համակարգում, եթե ժամանակի որևէ պահից սկսած՝ նրա վրա ազդող բոլոր ուժերի համագորը հավասարվի զրոյի:

- 1) Կշարունակի շարժվել այդ պահին ունեցած արագությամբ:
- 2) Կկատարի հավասարաչափ դանդաղող շարժում:
- 3) Կշարունակի շարժվել նախկին արագացմամբ:
- 4) Ակնթարթորեն կանգ կառնի:


6

Ո՞ր գրաֆիկն է պատկերում հաստատուն ուժի ազդեցությամբ տեղի ունեցող շարժում:


1) ա:




2) բ:



3) գ:



4) դ:



7

Ո՞րն է Հովկի օրենքն արտահայտող բանաձևը:

1) $F = G \frac{m_1 m_2}{r^2} :$

2) $\vec{F} = m\vec{a} :$

3) $F = m(g + a) :$

4) $F_x = -kx :$

8


Ո՞ր ֆիզիկական մեծությունն է կոչվում ուժի մոմենտ:

- 1) Ուժի մոդուլի և նրա ազդեցությամբ մարմնի պտտման անկյան արտադրյալը:
- 2) Ուժի մոդուլի և նրա ազդեցությամբ մարմնի անցած ճանապարհի արտադրյալը:
- 3) Ուժի մոդուլի և նրա ազդման ժամանակի արտադրյալը:
- 4) Ուժի մոդուլի և ուժի բազուկի արտադրյալը:

9

Նկարում պատկերված անկշիռ ձողի վրա ազդում են $|\vec{F}_1| > |\vec{F}_2|$ երկու հակուղղված ուժեր: Նկարի հարթության ուղղահայաց առանցքի նկատմամբ ո՞ր կետով անցնող առանցքի նկատմամբ ձողը կլինի հավասարակշռության վիճակում:

- 1) a կետ:
- 2) b կետ:
- 3) c կետ:
- 4) Ωչ մի կետ:



10

Միևնույն ճնշման ուժն առաջին դեպքում ազդում է S մակերեսի վրա, իսկ երկրորդ դեպքում՝ 3 անգամ մեծ մակերեսի վրա: Ո՞ր դեպքում է ճնշումն ավելի մեծ և քանի՞ անգամ:

- 1) Առաջին դեպքում և 3 անգամ:
- 2) Երկրորդ դեպքում և 3 անգամ:
- 3) Առաջին դեպքում և 9 անգամ:
- 4) Երկրորդ դեպքում և 9 անգամ:

11

Մարմինը լողում է ρ_0 խտությամբ հեղուկում այնպես, որ նրա ծավալի մեկ երրորդը հեղուկից դուրս է: Որքա՞ն է մարմնի խտությունը:

- 1) $\rho_0/2$:
- 2) $\rho_0/3$:
- 3) $2\rho_0/3$:
- 4) ρ_0 :

12


Ո՞ր տատանումներն են կոչվում ազատ:

- 1) Որոնք տեղի են ունենում արտաքին պարբերական ուժի ազդեցությամբ:
- 2) Որոնք տեղի են ունենում համակարգի ներքին ուժերի ազդեցությամբ:
- 3) Որոնք տեղի են ունենում սինուսի կամ կոսինուսի օրենքով:
- 4) Որոնք չեն մարում:

13

Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող նյութական կետի կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ո՞ր խումբն է ճիշտ նշում տատանումների լայնույթն ու պարբերությունը:


- 1) 0,4 մ, 4 վ:
- 2) 0,4 մ, 6 վ:
- 3) 0,2 մ, 2 վ:
- 4) 0,2 մ, 4 վ:



14

Նկարում պատկերված է ջրի մակերևույթին առաջացած ալիքի տարածական փոփածքը՝ ժամանակի որոշակի պահին: Ալիքի տարածման արագությունը 2 մ/վ է: Որքա՞ն է ալիքի հաճախությունը:

- 1) $0,4 \text{ } \zeta\text{g}$:
- 2) $2,5 \text{ } \zeta\text{g}$:
- 3) $10 \text{ } \zeta\text{g}$:
- 4) $20 \text{ } \zeta\text{g}$:



15

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Մոլային զանգված կոչվում է՝

- 1) մեկ մոլեկուլի զանգվածը:
- 2) մեկ ատոմի զանգվածը:
- 3) 12 կգ ածխածնի զանգվածը
- 4) սվեալ նյութի $6,02 \cdot 10^{23}$ մոլեկուլների զանգվածը:

16

Ո՞ր պրոցեսի ընթացքում չի փոխվում իդեալական գազի մոլեկուլների միջին քառակուսային արագությունը:

- 1) Իզոբար:
- 2) Իզոխոր:
- 3) Իզոթերմ:
- 4) Կամայական պրոցեսի:

17

Ո՞րն է հարաբերական երկարացման չափայնությունը միավորների ՄՀ-ում:

- 1) $\text{Ն}/\text{մ}^2$ -ն:
- 2) Նմ -ն:
- 3) $\text{Ն}/\text{մ}^3$ -ն:
- 4) Չափայնություն չունի:

18

Ինչպես է լիցքավորված մարմինը, եթե նրա մեջ էլեկտրոնների թիվը գերազանցում է պրոտոնների թիվը:

- 1) Դրական լիցքով:
- 2) Բացասական լիցքով:
- 3) Լիցքավորված չէ:
- 4) Հնարավոր է՝ լիցքավորված լինի ինչպես դրական, այնպես էլ բացասական լիցքով:

19

Ինչպես կփոխվի կետային լիցքի ստեղծած դաշտի լարվածության մոդուլը տարածության որևէ կետում, եթե լիցքի մեծությունը փոքրացվի n անգամ:

- 1) Կմեծանա n անգամ:
- 2) Կփոքրանա n անգամ:
- 3) Կմեծանա n^2 անգամ:
- 4) Կփոքրանա n^2 անգամ:

20


R շառավղով սնամեջ մետաղն զնդին հաղորդել են q լիցք: Որքա՞ն է էլեկտրաստատիկ դաշտի լարվածությունը զնդի կենտրոնում:

- 1) 0 :
- 2) $k \frac{|q|}{R^2}$:
- 3) $k \frac{|q|}{R}$:
- 4) $k \frac{q^2}{R^2}$:

21

Ո՞ր գրաֆիկն է արտահայտում հաղորդչի էլեկտրաունակության կախումը նրա լիցքի մեծությունից:

- 1) a:
- 2) b:
- 3) c:
- 4) d:



22

Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:


Էլեկտրական հոսանքը՝

- 1) լիցքավորված մասնիկների ուղղորդված շարժումն է;
- 2) լիցքավորված մասնիկների քառային շարժումն է;
- 3) ատոմների և մոլեկուլների ուղղորդված շարժումն է;
- 4) ատոմների և մոլեկուլների քառային շարժումն է;

23

Որքա՞ն է նկարում պատկերված շղթայի ընդհանուր դիմադրությունը:

- 1) R :
- 2) $1,5R$:
- 3) $2 R$:
- 4) $4 R$:



24

Ինչպե՞ս կփոխվի միավոր ժամանակում հաղորդչում անջատված զերմաքանակը, եթե, անփոփոխ պահելով լարումը, նրա դիմադրությունը մեծացնենք 3 անգամ:

- 1) Կմեծանա 3 անգամ:
- 2) Կփոքրանա 3 անգամ:
- 3) Կմեծանա 9 անգամ:
- 4) Կփոքրանա 9 անգամ:

25

Ի՞նչ լիցքակիրներով է պայմանավորված էլեկտրական հոսանքը մետաղներում:

- 1) Դրական իոններով:
- 2) Բացասական իոններով:
- 3) Ազատ էլեկտրոններով:
- 4) Պրոտոններով:

26

Ինչպե՞ս է փոխվում էլեկտրոլիտի հաղորդականությունը ջերմաստիճանը բարձրաց-նելիս:

- 1) Մեծանում է:
- 2) Փոքրանում է:
- 3) Չի փոխվում:
- 4) Կմեծանա կամ կփոքրանա:

27


Ինչպե՞ս է կոչվում այն ֆիզիկական մեծությունը, որը հավասար է ինդուկցիայի \vec{B} վեկտորի մոդուլի և այդ դաշտում կոնտուրի մակերևույթի S մակերեսի և ինդուկցիայի վեկտորի ու մակերևույթի նորմալի կազմած անկյան կոսինոսի արտադրյալին:

- 1) Ինդուկտիվություն:
- 2) Մագնիսական հոսք:
- 3) Մագնիսական ինդուկցիա:
- 4) Մագնիսական դաշտի էներգիա:

28

Նկարում պատկերված է շրջանակ քափանցող մագնիսական հոսքի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր միջակայքում շրջանակում մա-կածված էլՇՈՒ-ի մոդուլը կունենա ամենամեծ արժեքը:

- 1) 0-4 վ միջակայքում:
- 2) 4-8 վ միջակայքում:
- 3) 8-9 վ միջակայքում:
- 4) 9-12 վ միջակայքում:



29

Ի՞նչ միավորով է չափվում ինդուկտիվությունը միավորների ՄՀ-ում:

- 1) 1 ՀԲ:
- 2) 1 Ֆ:
- 3) 1 S_L:
- 4) 1Վբ:

30

Տատանողական կոնտուրում տեղի են ունենում շնարող էլեկտրամագնիսական տատանումներ: Ժամանակի ընթացքում ո՞ր մեծությունն է մնում անվտանգության:

- 1) Կոնդենսատորի լիցքը:
- 2) Կոնդենսատորի էլեկտրական դաշտի լարվածությունը:
- 3) Կոճի մագնիսական դաշտի էներգիան:
- 4) Կոճի մագնիսական դաշտի և կոնդենսատորի էլեկտրական դաշտի էներգիաների գումարը:

31

Տրանսֆորմատորի առաջնային փաթույթում լարումը՝ $U_1 = 250$ Վ: Որքա՞ն է U_2 լարումը երկրորդային փաթույթի ծայրերին, եթե տրանսֆորմացիայի գործակիցը 10 է:

- 1) $U_2 = 2,5$ Վ:
- 2) $U_2 = 25$ Վ:
- 3) $U_2 = 250$ Վ:
- 4) $U_2 = 2500$ Վ:

32

Ի՞նչն է ստվերի առաջացման պատճառը:

- 1) Լուսի բեկումը միջավայրում:
- 2) Լուսի դիֆրակցիան մարմնից:
- 3) Լուսի ցրումը մարմնից:
- 4) Լուսի ուղղագիծ տարածումը:

33

Լուսի ալիքի բեկման ժամանակ ո՞ր մեծությունը չի փոխվում:

- 1) Տարածման արագությունը:
- 2) Ալիքի հաճախությունը:
- 3) Ալիքի երկարությունը:
- 4) Ալիքի լայնութը:

34

Ո՞ր երևոյթն է կոչվում դիֆրակցիա:

- 1) Երկու ալիքների վերադրման երևոյթը:
- 2) Ալիքի՝ արգելքները շրջանցելու երևոյթը:
- 3) Սպիտակ լուսի տարալուծումը տարբեր գույնի լույսերի:
- 4) Բարակ թաղանթների գունավորման երևոյթը:

35

Մասնիկի լրիվ էներգիան քանի անգամ է մեծ նրա հանգստի էներգիայից, եթե նրա կիմետրիկ էներգիան երեք անգամ մեծ է հանգստի էներգիայից:

- 1) 2:
- 2) 3:
- 3) 4:
- 4) 0,5:

36 Լազերի λ ալիքի երկարությամբ ճառագայթման հզորությունը P է: Քանի՞ ֆուսոն է առաքում լազերը միավոր ժամանակամիջոցում:

- 1) $\frac{P}{\lambda}$:
- 2) $\frac{P\lambda}{c}$:
- 3) $\frac{Pc}{h\lambda}$:
- 4) $\frac{P\lambda}{hc}$:

37 Ո՞րն է նախադասության ճիշտ շարունակությունը:

Համաձայն Ուեզերֆորդի մոդելի՝ ատոմի միջուկում կենտրոնացված են...

- 1) ատոմի գրեթե ամբողջ զանգվածը և ամբողջ դրական լիցքը:
- 2) ատոմի ամբողջ զանգվածը և բացասական լիցքը:
- 3) ատոմի զանգվածի չնչին մասը և ամբողջ դրական լիցքը:
- 4) ատոմի զանգվածի չնչին մասը և ամբողջ բացասական լիցքը:

38 Ի՞նչ և հաճախության ֆուսոն է ճառագայթում ատոմը, եթե այն E_2 էներգիայով գրգռված վիճակից անցնում է E_1 էներգիայով հիմնական վիճակի:

- 1) $\frac{E_2}{h}$:
- 2) $\frac{E_1}{h}$:
- 3) $\frac{E_2 + E_1}{h}$:
- 4) $\frac{E_2 - E_1}{h}$:

39 Ի՞նչ նշանի լիցք ունի ատոմի միջուկը:

- 1) Դրական:
- 2) Բացասական:
- 3) Էլեկտրաչեղոք է:
- 4) Կունենա տարբեր նշանի լիցքեր:

40

Ո՞ր միջուկի α -տրոհման հետևանքով է առաջանում $^{216}_{84}Po$ միջուկը:

- 1) $^{214}_{80}Hg$:
- 2) $^{212}_{84}Pb$:
- 3) $^{220}_{86}Rn$:
- 4) $^{218}_{86}Rn$:

41

24 մ/վ արագությամբ հավասարաչափ շարժվող մեքենան նույն ճանապարհն անցավ 10 վ-ում, իսկ երկրորդը՝ 15 վ-ում: Որքա՞ն է հավասարաչափ շարժվող երկրորդ մեքենայի արագությունը:

42

0,5 մմ տրամագիծ ունեցող մազական խողովակով հեղուկը բարձրացավ 20 մմ: Որքա՞ն է այդ հեղուկի խտությունը, եթե նրա մակերևութային լարվածության գործակիցը $0,021 \text{ N/m}$ է: Ազատ անկման արագացումը 10 m/s^2 է:

43

Երկու միևնույն չափի մետաղե գնդիկներ ունեն – 3 նԿլ և 9 նԿլ լիցքեր: Որքա՞ն կլինի գնդիկներից յուրաքանչյուրի լիցքը, եթե նրանք հպենք իրար և նորից հեռացնենք:

Պատասխանը բազմապատկեր 10^9 -ով:

44

Երկու կոհերենտ ալիքների ընթացքի տարրերությունն ինչ-որ կետում $3,85 \cdot 10^{-6}$ մ է, որտեղ վերադրվելով՝ ալիքները առաջացնում են հինգերորդ կարգի մինիմում: Որքա՞ն է այդ ալիքների երկարությունը: Պատասխանը բազմապատկել 10^7 -ով:

Փակ անոթում գտնվող ջրի և իր հազեցած գոլորշու ջերմաստիճանը 300 Կ է: Անոթում ջերմաստիճանը բարձրացրին 1,2 անգամ: Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:

1. Հեղուկի մակերևույթից միավոր ժամանակում հեղուկ վիճակից գոլորշու անցնող մոլեկուլների թիվը չփոխվեց:
2. Հազեցած գոլորշու կոնցենտրացիան չփոխվեց:
3. Հազեցած գոլորշու զանգվածն աճեց:
4. Հազեցած գոլորշու մոլեկուլների միջին կինետիկ էներգիան աճեց 1,2 անգամ:
5. Հազեցած գոլորշու մոլեկուլների միջին քառակուսային արագությունը չփոխվեց:
6. Հազեցած գոլորշու ճնշումն աճեց ավելի քան 1,2 անգամ:

Բ մակարդակ

(46-47) Յ կգ զանգվածով մարմինը դադարի վիճակից հաստատում համազոր ուժի ազդեցությամբ 4 վ-ում անցնում է 40 ն ճանապարհ:

46 Որքա՞ն է մարմնի շարժման արագացումը:

47 Որքա՞ն է մարմնի վրա ազդող համազոր ուժը:

(48-49) Փակ անորում 4 կգ զանգվածով 5°C ջերմաստիճանի գազը տաքացրին մինչև 839°C :

48 Քանի՞ անգամ մեծացավ գազի ճնշումը տաքացնելու հետևանքով:

49 Ի՞նչ զանգվածով գազ պետք է դուրս բռնել անորից, որպեսզի նրա մեջ վերականգնվի նախկին ճնշումը:

(50-51) Լամպը 4,5 Վ ԷլՉՈւ-ով աղբյուրին միացնելիս նրա վրա լարումը 3,75 Վ է, իսկ հոսանքը՝ 0,25 Ա:

50 Որքա՞ն է լամպի դիմադրությունը:


51 Որքա՞ն է հոսանքի աղբյուրի ներքին դիմադրությունը:

(52-53) Դիֆրակտային ցանցը 1 մմ-ում պարունակվում է 500 նրբագիծ: Ցանցի վրա ուղղահայաց ընկնում է $5 \cdot 10^{-7}$ մ ալիքի երկարությամբ մետրանգ լույսի փունջ:

52 Ի՞նչ անկյան տակ է դիտվում երկրորդ կարգի մաքսիմումը՝ արտահայտած աստիճաններով:

53 Քանի՞ մաքսիմում է պարունակում դիֆրակտային սպեկտրը:

- (54-55) Լազերի աշխատանքի եռամակարդակ սխեման պատկերված է 1-ին նկարում: Առողման լույսի ալիքի երկարությունը՝ $\lambda_0 = 400$ նմ, իսկ հարկադրական ճառագայթման ալիքի երկարությունը՝ $\lambda_1 = 500$ նմ: Պլանկի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ $\text{Дж} \cdot \text{с}$ է, վակուումում լույսի արագությունը՝ $3 \cdot 10^8$ մ/վ:



Նկ. 1


54

Որքա՞ն է գրգռված (E_3) և մետաստաբիլ (E_2) մակարդակների էներգիաների տարբերությունը: Պատասխանը բազմապատկել 10^{21} -ով:

55

Որքա՞ն է լազերային ճառագայթման ֆուսոնի էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{21} -ով:

- (56-58) 2-րդ նկարում պատկերված է միատում իդեալական գազի վիճակի փոփոխությունը նկարագրող դիագրամը: Իզոխոր սառեցման ժամանակ գազի ճնշումը փոքրանում է հինգ անգամ, այնուհետև 2 վիճակից գազն իզոբար սեղմվում է մինչև 3 վիճակը, որից հետո վերադարձն սկզբական վիճակին կատարվում է այնպիսի արոցեսով, որ գազի ճնշումը ծավալից կախված աճում է գծային օրենքով:



56

Քանի՞ անգամ է 1 վիճակում գազի ջերմաստիճանը մեծ 3 վիճակում գազի ջերմաստիճանից:

57

Որքա՞ն է 3 վիճակից 1 վիճակին անցման ժամանակ գազի կատարած աշխատանքի և իզոբար սեղման ժամանակ գազի կատարած աշխատանքի հարաբերության մոդուլը:

58

Սեկ ցիկլի ընթացքում գազին հաղորդած ջերմաքանակը քանի՞ անգամ է մեծ գազի կատարած աշխատանքից:

- (59-61) $6,6 \cdot 10^{-7}$ մ ալիքի երկարությամբ լուսային ճառագայթների գլանաձև փունջը նորմալի ուղղությամբ վակուումում ընկնում է բացարձակ սև մակերևույթի վրա և առաջացնում $6 \cdot 10^{-5}$ Պա ճնշում: Պատճենի հաստատունը $6,6 \cdot 10^{-34}$ $\Omega \cdot \text{Վ}$ է, վակուումում լույսի արագությունը՝ $3 \cdot 10^8$ մ/վ:

59

Որքա՞ն է ֆոտոնների կոնցենտրացիան փնջում: Պատասխանը բազմապատկել 10^{-14} -ով:

60

Որքա՞ն է 1 վ-ում 1 մ² մակերեսի վրա ընկնող ֆոտոնների թիվը: Պատասխանը բազմապատկել 10^{-22} -ով:

61

Որքա՞ն է 1 վ-ում մակերևույթի 1 մ² մակերեսին հաղորդված էներգիան: Պատասխանը բազմապատկել 10^{-3} -ով:

- (62-65) Լիցքավորված գնդիկը կախված է 80 սմ երկարությամբ թելից և տեղադրված է հորիզոնական ուղղված 0,5 Տլ ինդուկցիայով համասեռ մագնիսական դաշտում: Մագնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորին ուղղահայաց հարթության մեջ, թելը թեսի հետ միասին շեղում են մինչև հորիզոնական դիրքը և բաց բողնում: Հակադիր ուղղություններով գնդիկը հավասարակշռության դիրքով անցնելիս թելի լարման ուժերի տարբերությունը $5 \cdot 10^{-4}$ Ն է: Օդի դիմադրությունն անտեսել: Ազատ անկման արագացումը 10 մ/վ^2 է:

62

Որքա՞ն է գնդիկի արագությունը հավասարակշռության դիրքով անցնելիս:

63

Որքա՞ն է գնդիկի արագացումը հավասարակշռության դիրքով անցնելիս:

64

Որքա՞ն է գնդիկի վրա ազդող Լորենցի ուժը հավասարակշռության դիրքով անցնելիս: Պատասխանը բազմապատկեք 10^5 -ով:

65

Որքա՞ն է գնդիկի լիցքը: Պատասխանը բազմապատկեք 10^6 -ով:

(66-69) Հորիզոնական ուղղությամբ 40 մ/վ արագությամբ քոչող 10 գ զանգվածով գնդակը հարվածում է 1,6 մ երկարությամբ անկշիռ թելից կախված 90 գ զանգվածով չորսուին և միսրճվում նրա մեջ: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է:

66

Որքա՞ն է չորսուի արագությունը հարվածից անմիջապես հետո:

67

Որքա՞ն է չորսուի առավելագույն բարձրությունը սկզբնական մակարդակի նկատմամբ: Պատասխանը բազմապատկել 10-ով:


68

Որքա՞ն է թելի առավելագույն շեղման անկյունը:

69

Հարվածի հետևանքով որքա՞ն էներգիա է փոխակերպվում ջերմային էներգիայի: Պատասխանը բազմապատկել 10-ով:

Օղում, օպտիկական սեղանի վրա տեղադրված են երկու բարակ ոսպնյակներ, որոնց կիզակետային հեռավորությունները մոդուլով հավասար են: Ոսպնյակների գլխավոր օպտիկական առանցքներին ուղղահայաց, նրանց կիզակետային հեռավորության մոդուլին հավասար հեռավորության վրա տեղադրված է էկրանը (նկ. 3): Հաստատե՛ք կամ ժխտե՛ք հետևյալ պնդումները:



Նկ. 3

1. I-ին ոսպնյակը հավաքող է, երկրորդը՝ ցրող:
2. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող ա ճառագայթն, անցնելով I-ին ոսպնյակը, ընկնում է Ա կետն այնպես, որ նրա մտովի ետ շարունակությունն անցնում է ձախ F կիզակետով:
3. Կիզակետով անցնող b ճառագայթը, անցնելով I-ին ոսպնյակը, տարածվում է գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ և ընկնում է էկրանի B կետը:
4. Գլխավոր օպտիկական առանցքին զուգահեռ տարածվող ա ճառագայթն, անցնելով II-րդ ոսպնյակը, ընկնում է գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետը:
5. b ճառագայթը, որը II-րդ ոսպնյակի բացակայության դեպքում էկրանի հետ կհատվեր գլխավոր օպտիկական առանցքի և էկրանի հատման F կետում, ոսպնյակն անցնելուց հետո տարածվում է էկրանին ուղղահայաց ուղղությամբ և ընկնում է Ծ կետը:
6. Ոսպնյակները կիա կպցնելիս, համակարգի օպտիկական ուժը հավասարվեց մեկի: